

“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԲՆԵՒ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՄԵՐԵՐ 1, 1901

ԹԻՒ 11



ՅԻՍՈՒՍ ԿՕՐՀՆԷ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

ՈՐչափ արուեստագէտներ ջանա-
ցած են այս տեսարանը մեղի ներկա-
յայնել: Անոնք փրկչին երևոյթը և
մայրերուն և անոնց զաւակներուն
դէմքերն ու հանդերձները նկարելու
համար ստիպուեցան իրենց երևակա-
յութեան ապաւինիլ: Չենք կրնայ
անտարակոյս ըլլալ թէ փրկիչը երբեք
կը նմանէր զինք ներկայայնող պատ-
կերներուն. բայց շնորհակալ ենք
արուեստագէտներէն որոնք բաւա-
կան իրականութեան մօտ կերպով
մեր առջև կը դնեն մեր Տէրօջ կեան-
քին մէջ պատահած այս դէպքը: Թե-
րևս մենք աւելի յօժար ենք կորսն-
ցնել անոր հրաշքներէն մէկը սրբա-
զան պատմութեան մէջէն, քան այն
պատմութիւնը զոր Մատթէոս, Մար-
կոս և Դուկաս ամէնն ալ կը գրեն,
և ասկէ կը հասկցուի թէ ի՞նչ կարե-
ւորութիւն կու տան անոր: Մէկ բան
զոր կ'ուզենք գիտնալ այն մէկ էա-
կին վրայ որ երկիրքէն իջաւ, սա է
թէ ի՞նչ տեսակ մարդ է ան, ի՞նչ է

անոր զգացումը դէպ ի մարդիկ որոնց
զրկուեցաւ: Եւ բան մը աւելի պարզ
չցուցնել անոր փափուկ սիրտը և սե-
րը քան այս դէպքը: Անիկա խրախու-
սած է հազարաւոր մանուկներ, որպէս
զի Բրիտանոսի գան իրենց կանուխ-
ուան օրերուն մէջ, իրենց սիրտերը
անոր տան և անոր հետևողներն ըլ-
լան: Անիկա միթիարած է անթի-
ճնողքներ, որոնք կ'ողբան իրենց զա-
ւակներուն մահը, վստահ ըլլալով թէ
իրենց մեռած պզտիկները ապահով
են սիրելի փրկչին բազումներուն մէջ:
Եւ Հնդկաստանի բոլոր հարստու-
թիւններուն դէմ չեն ուզեր որ Սուրբ
Գիրքին մէջէն աւրուի սա խօսքը,
“Թող տուէք սա մանր տղոցը որ
ինձի գան:”



ԲՆՏԱՆԵԿԱՆ ՇԱՀԱԿՈՒԹԻՒՆԸ

“Փայտի սնուկը դատարկ է,” պո-
ռայ մայրիկը: “Ո՛հ, ի՞նչ է սա, միշտ
կայ ընելու գործ մը,” ըսաւ Պերճ և
բարկութիւնով վար դրաւ իր ձեռքի
դանակը որով լապտեր մը կը շինէր
գնդաձև դեղին դուռմէ մը: “Ո՛չ մէկը
ինձմէ աւելի գործ կ'ընէ — շարու-
նակ գործ, գործ, գործ:” “Եւ երբեք
խող չկայ,” հարցուց մեծ մայրը
հանդարտօրէն, պատուհանին քով
գտնուող իր արևուտ անկիւնէն: “Եր-
բեմն,” ըսաւ Պերճ, “բայց շատը
փայտ, ջուր, տաշեղ, և — և ամէն
բան:” “Տեսնամ,” ըսաւ մեծ մայրը
և վար դրաւ իր հիւսելու գուլպան
պայծառագոյն սակառին մէջ: “Ե-
րէկ պզտիկ տղայ մը, զոր կը ճանչ-
նամ, իրիկուան դէմ իր բարեկամին
հետ ձուկ որսալով անցուց: Այստղան,
որնուագածութիւն կը սիրէր կառքով
գեղ գնաց իր մեծ հօր հետ նուա-
ղախումբի մը ունկնդրելու համար:
Այս առաւօտ իրեն արտօնութիւն
տրուեցաւ իր հօրեղբոր տունն եր-

թալ, հոնկէ երկու ոսկեգոյն դուռմ-
ներ առնելու — ոչ թէ համեղ կար-
կանդակներ շինելու համար, հա-
պա —” ձիջդ այդ ատեն Պերճ միտք
բերաւ դատարկ փայտի սնուկը, և
ուստի մեծ մայրը շինցուց իր խօսքը:
Երբ Պերճ ետ եկաւ հանդարտած,
այն ատեն մեծ մայրը գացած էր:
Յետոյ անմիջապէս ետ դարձաւ իր
ձեռքը թուխ կողեր ունեցող տամա-
րով մը: “Ես բան մը խորհեցայ, սի-
րելիս,” ըսաւ մեծ մայրը, իր աթոռը
սեղանին քով քաշելով, ուր Պերճ
կը զբաղէր իր դուռմէ լապտերը շի-
նելու: Պերճ վար դրաւ իր դանակը
և վեր նայեցաւ հետաքրքրութեամբ:
“Հիմա,” նորէն ըսաւ մեծ մայրը, “ես
կ'ուզեմ որ դուն և մայրիկդ ընտա-
նեկան Շահակցութիւն մը կազ-
մէք:” “Ո՛հ, մեծ մայր, ե՛ս,” խօսքը
ընդմիջեց Պերճ, ապշելով այդ երկար
անուններուն համար: “Ս. յո, ընտանե-
կան Շահակցութիւն, որուն ատենապե-
տը պիտի ըլլայ մայրիկդ, և քարտու-
ղարը՝ դուն: Եկէք, խորհի՛ք ատոր
վրայ, ես համարակալը պիտի ըլլամ:”
“Ի՞նչ պիտի ընեմ ես,” հարցուց
Պերճ: “Ի՛նչ գործդ պիտի ըլլայ ար-
ձանագրութիւնները պահել:” “Ո՛հ մա,”
ըսաւ մայրիկը խնդալով: “Ո՛հ, ընդ-
հանուր տեսուչ,” պատասխանեց մեծ
մայրը ժպտելով: “Ս. յոնքն՝ երկուքդ
մէկտեղ պիտի գործէք — երկուքդ
պիտի գործէք իրարու համար, նպա-
տակ ունենալով ձեր ընդհանուր շա-
հը — զուարթ, երջանիկ տուն մը:”
“Աղէկ, ես պատրաստ եմ,” գոչեց
Պերճ, բոլորովին տուած իր ուշադ-
րութիւնը: “Եւ դ՞ու՞ն, մայրիկ:” “Ան-
շուշտ, և ասիկա զմայրելի առաջարկ
մըն է,” ըսաւ ան: “Հարկաւ, դուք
պիտի ընէք ի՞նչ որ պէտք է իրարու
աղէկութեան համար,” շարունակեց
մեծ մայրը, “և Պերճ պիտի գրէ ա-

մէն մէկ օրուան գործերը: Իրիկունները պիտի նայինք հաշիւները: Մէկ երեսը մայրիկին քեզի համար ըրած բաներուն յատկացուր," ըսաւ մեծ մայրը, «և դիմացի երեսը քու անոր համար ըրածներուդ: Կը հասկնաս": Պերճ շարժեց իր գլուխը և տոմարը ձեռք առաւ, մինչ մեծ մայրը նորէն սկսաւ իր գուլպան: Պերճ շուտ ետքը մոտի մը պէտք ունեցաւ իր դգու մէ լրացտերներուն համար: «Ասիկա երկուքին ալ կը բաւէ եթէ մէջտեղէն կտրես," ըսաւ մայրիկը, Պերճի տալով ուրիշ ընտիր մոմ մը: «Շնորհակալ եմ: Ահա մայրիկին հաշուին անցուելու բան մը," ըսաւ Պերճ: Կէս օրուան ճաշէն շատ մը ետքն էր, և Պերճ դեռ միակ բանմը գրեց իրեն յատկացուած երեսին վրայ, մինչ մայրիկին երեսին կէսը լեցուեցաւ: «Չէի կարծեր թէ մայրիկը այսչափ բան կ'ընէ ինձի համար," ըսաւ Պերճ ինքնիրեն լուրջ կերպով: Երբ հիւրանոցի լամբարը վառուեցաւ, մեծ մայրը յարմար ժամանակ սեպեց ընտանեկան Շահակցութեան հաշիւները նայելու համար: Պերճ բերաւ հաշուետոմարը: Յետոյ ինք և ատենապետը իրենց ամուսնները քաջեցին համարակալին երկու կողմը: Քարտուղարը քիչ մը կարմրեցաւ երբ մեծ մայրը (պէտք էր ըսել, համարակալը) առաջին երեսին նայեցաւ: Կարգաց ճիշդ ինչ որ գրուած էր հոն:

Ընտանեկան Շահակցութեան Անճամբերութիւն: Ատենապետին հաշիւը. — Ատենապետը տուաւ ինձի (ոչ, քարտուղարին) երկու մոմ դգու մէ լրացտերներուն համար: Շիտակեց քարտուղարին անկողինը: Ճաշ պատրաստեց և հաւկիթ մըն ալ խաշեց յիշեալ քարտուղարին համար: Գուլպաներ նորոգեց քարտուղարին համար: Կարկտեց քարտուղարին վարտիքը: Օգնեց անոր իր հօրը նամակ մը գրելուն: Արդուկեց քարտուղարին օձիքները: Մաքրեց քարտուղարին կիրակնօրեայ վերարկուն: Քարտուղարին մատէն միտուած փուշ մը հանեց:

Քարտուղարին հաշիւը. — Ատենապետին դոյլ մը շուր բերաւ (քարտուղարին ճաշին համար): Փայտ բե-

րաւ: Յ. Գ. Մի կարծէք թէ քարտուղարին օձիքները առանց կրակի կրնային արդուկուիլ: Օգնեց պնակները վերցնելու:

ՊԵՐՃ, ՔԱՐՏՈՒԳԱՐ: Յաջորդ երեսը նման արդիւնք ցուցուց. «Կը յայտարարեմ թէ ատենապետը աւելի գործ ըրած է," ըսաւ մեծ մայրը: «Քարտուղարը կրնայ զանց ըրած ըլլալ բաներ զորոնք արձանագրած չէ իր երեսին վրայ," ըսաւ մայրիկը: «Ոչ, մայրիկ," ըսաւ Պերճ համատարէն, մոռնալով անոր պաշտօնական տիտղոսը, «գուն իմ քեզի համար ըրած իս տասը անգամը կ'ընես ա մէն օր ինձի համար: Բայց ատիկա պիտի չգիտնայի եթէ մեծ մայրը չըլլար:"



ՄԱՆՉԵՍԹԵՐԻ ՔԱՂԱՔԱՐ

Մանչեսթըր Անգղիոյ ամէնէն մեծ տարազագործ քաղաքն է, և պէտք է որ Անգղիոյ երկրորդ քաղաքը համարուի մեծութեամբ: Թէև Լիվըրփուլի բնակիչները աւելի կը հաշուին, բայց Մանչեսթըրը և Սալֆորտ երկուքը մէկ քաղաք են իրապէս, որոնք իրարմէ բաժնուած են ոչ թէ լայն նեղուցով մը ինչպէս Վուսփորն է Կ. Պոլսի և Իսակիտարի մէջտեղ, այլ՝ իրուէլ կոչուած փոքրիկ դետով: Եւ եթէ Մանչեսթըրի 530,000 բնակիչներուն վրայ աւելցուին Սալֆորտի 220,000 բնակիչները, գունակէն կ'ըլլայ ճուշտ կը շարունակեն Մանչեսթըրէ մինչև Օլտրամ, որ ուրիշ քաղաք մըն է 130,000 բնակիչներով: Ուրիշ քանի մը մանր քաղաքներ ալ կան մօտերը, որոնք բոլորը իրենց մեծ դրացիներուն նման կը

գրադին բամբակ ապրանքներ պատրաստելու: Իրօք, Մանչեսթըրի կեդրոնէն 40 մղոն երկայնութեամբ շառաւիղի մը գծած բոլորակին մէջ աւելի բնակիչ կը գտնուի քան նոյն հեռաւորութեան մէջ Լոնտոնի Սթրիտ Գոզա եկեղեցիէն նոյնչափ հեռաւորութեամբ միջոցի մէջ: Նախն ջրանցքը որ 35 մղոն երկայնութիւն ունի, Մանչեսթըրը նաւահանգստի փոխած է, և խոշոր շոգենաններ հիմա կը բեռցուին քաղաքին քարափին առջև: Քաղաքը իր շուրի բաւական մէկ մասը կ'առնէ Քլեմպըրլէնտի լիճերէն, որ 96 մղոն հեռու են, և այս բանին համար 2,000,000 Անգղ. ոսկի ծախք եղած է: Պատկերին մէջ ներկայացուած շէնքը Մանչեսթըրի քաղաքապետական ապարանքն է: Ինը տարիէն շինուեցաւ անկա 1,000,000 Անգղ. ոսկիէ աւելի ծախքով: Ունի 314 սենեակ: Քաղաքապետին պաշտօնական բնակարանն է աւելի, և քաղաքին վարչութեան քսանուերկու ճիւղերուն պաշտօնեաները անոր մէջ կը պաշտօնավարեն: Շէնքին ճակատը Ալպերտի արձանը կանգնած է, ի յիշատակ հանգուցեալ Վիլիամ թագուհոյն ամուսնին, Ալպերտ իշխանի: Պատկերին մէջ տեսնուած արձաններէն մէկը ճան Պրայթինն է, որ քաղաքին ներկայացուցիչն էր Խորհրդարանին մէջ, և որ անցեալ դարու բոլոր իրիտանացի քաղաքագէտներուն ա մէնէն պերճախօսներէն և մեծարուածներէն մէկն էր:

ՏԱԿԱՍԻՆ ՄՆԱՑ ԲԱՆ ՄԸ

Հին ասացուած մըն է սա խօսքը թէ եթէ քսան փարանոց մը աչքին մօտ բռնուի, արևին լոյսը կը ծածկէ. և իրօք շատ անգամ այնպէս կը պատահի որ փոքր կորուստները արգելք կ'ըլլան մեծ օրհնութիւններ տեսնելու: Վաճառական մը որ քանի մը տարի առաջ գործի անյաջողութիւն ունեցաւ, տուն գնաց շատ գրգռուած, և դէմքը տոգոյն իր յուսահատութենէն: «Ի՞նչ կայ," հարցուց կինը: «Կործանուած եմ, սնանկացած եմ, ամէն բանս կորսնցուցած եմ," աղաղակեց, ձեռքը ճակտին վրայ կոխելով: «Ամէն


բա՛ն,” ըսաւ կինը . «ոչ, ես մնացած եմ :” «Ամէն բա՛ն, հայր,” ըսաւ ամէնէն մեծ տղան . «ահա ես հոս եմ :” «Ես ա՛լ,” ըսաւ պզտիկ աղջիկը, դէպ ի հայրը վազելով, և իր բազուկներով անոր վիզը գրկելով : «Ես կորսուած չեմ, հայր,” ըսաւ Էտի . «Եւ քու առողջութիւնդ ալ մնացած է,” ըսաւ կինը : «Եւ քու ձեռքերդ կը գործեն,” ըսաւ մեծ որդին, «և ես կրնամ օգնել քեզի :” «Եւ քու երկու ոտքերդ, որ քեզ տեղէ տեղ կը տանին, և քու երկու աչքերդ, որոնցմով կը տեսնես,” ըսաւ փոքրիկ Էտին : «Եւ ունիս Աստուծոյ խոստմունքները,” ըսաւ մեծ մայրը : «Եւ բարի Աստուած մը,” ըսաւ կինը : «Աստուած ներէ ինձի,” ըսաւ խեղճ վաճառականը աչքերը արցունքով լեցուած, «ես իմ ամէն բաներս կորսնցուցած չեմ :”

Մարդը միթաւրուեցաւ և նորէն իրեն գործին սկսաւ աշխարհի մէջ :

ՀՍԿՈՂ ԱԶԲԸ

Երբ մէկը Ռուբիկի ըսաւ թէ Աստուծոյ աչքը միշտ կը դիտէ և կը հսկէ մեզ, պըզտիկ տղան կեցաւ վայրկեան մը անհանգիստ, և յետոյ ըսաւ, «Ի՛նչ տեսակ հսկողութիւն է ատիկա : Գէորդ միշտ կը դիտէ զիս գպրուցին մէջ, և կրնայ ըսել վարժապետին երբ կը փափամ, և յուենիչ դնել կուտայ եթէ թեքս չծալլեմ : Անիկա միշտ կը նայի որ գպրոցի կանոններուն դէմ յանցանք գտնէ վրաս : Բայց հայրս կը դիտէ զիս երբ ծովեզերքը գտնուինք : Կը խնդայ երբ ես ջուրը կը ցատկեմ, և կ'իմացնէ ինձի երբ մեծ այլք մը կու գայ : Կը հսկէ զիս շարունակ, որպէս զի շատ խորունկը չերթամ, և կրնայ օգնել ինձի անմիջապէս մէկ վայրկենի մէջ : Եւ երբեք չեմ վախնար, վասն զի գիտեմ թէ անիկա միշտ հոն է : Ես կը սիրեմ հօրս հրակերու կերպը : Ի՛նչպէս է Աստուծոյ հսկելու կերպը :” Աշխարհ որչափ ատենէ ի վեր կը պատասխանէ Ռուբիկի այս հարցումին : Եւ սակայն տակաւին կը գտնուին շատեր, որոնք կը սոսկան մտածելով թէ Աստուած ամենագէտ թէ, իբր է անիկա ծուած կը նայի իրենց վրայ, և այդ նայուածքը

ահաւոր նայուածք է, և սուր՝ որ կը տեսնէ իրենց յանցանքները, և անգուժ՝ որ կը դատապարտէ ամէն մէկ գործուած սխալ : Բայց ատիկա մեր Հօրը աչքն է, անխոնջ և փափուկ, որ կը պահպանէ մեզ շարէն, կ'իմացնէ ամէն մէկ վտանգ, և կը հսկէ օգնելու և փրկելու համար :




ՊԱՐՈՒԹՈՒՆՏ

Պարութոյննա Բրիտանական ստացուածներէն մին է Հարաւային Ափրիկէի մէջ : Տարածութիւնն է իբր ամբողջ Չմիւռնիոյ գաւառին կէսին չափ, և ունի իբր քառորդ միլիոն բնակիչ : Շրջապատուած է Բէյթի Գաղթակա նութեանէն, Նաթալէ և Օրէյնճ գետի երկրէն : Եւ որովհետև Եւրոպացւոց արդիւրած է երկրի տէր ըլլալ, ամ



բող ճերմակ բնակիչները հաւանօրէն հազարէն պակաս են, և են կառավարական պաշտօնեաներ, վաճառականներ և միսիոնարներ : Հարիւր տարի առաջ Պարութոնները քիչուոր էին, բայց ԺԹ. դարուն սկիզբները Մոչէշ անունով մարդ մը ունեցան, որ եթէ աշխարհի մեծ ազգերէն մէկուն վերաբերէր, դարուն ամէնէն համբաւաւոր մարդոցմէն մէկը կ'ըլլար : Մոչէշ մեռաւ 1870ին : Պարութոյննա տի մէջ աշխատող միսիոնարները Գաղղիացի բողոքականներ են : Մազուփլա, Մոչէշի որդիներէն մէկը, որ մօտերս մեռաւ, երբ իրեն հարցուեցաւ թէ ինչո՞ւ չյարիւր միսիոնարներուն և աղէկ օրինակ մը ըլլալ իր ընկերներուն, սպայէս պատասխանեց . «Վասն զի կը վախնամ նեղ դռնէն :” Ծատեր, ճերմակ մորթ ունեցող մարդիկ, այդ նոյն պատճառաւ կ'արգիւնին Քրիստոսի հետեւելէ : Պարութոն

ները երկրագործ ժողովուրդ են, և արջառններու մեծ երամակներ կը պահեն : Այս պատկերը կը ցուցնէ անոնց սայլերէն մէկը որ Բրաքոտայլ գետէն կ'անցնի : Այս գետը մին է Հարաւային Ափրիկէի քանի մը գետերէն, որոնք նոյն անունը կը կրեն :



ՊԷՅԻ ՄՕՐԱՔՐՈՋ ԶԱՆԱԿՆԵՐԸ


Ժամանակաւ Լոնտոնի մէջ տիկին մը աղջիկ մը կը փնտռէր իր տնական գործերուն օգնելու համար : Տիկնոջ անունն էր Միսիս Լէյլի : Օր մը երբ կը պտըտէր փողոցին մէջ, բարեկամ տիկնոջ մը պատահեցաւ, և հարցուց անոր թէ արդեօք կը ճանչնա՞ր իրեն օգնելու կարող բարի աղջիկ մը : Բարեկամը ըսաւ անոր, «Ինչո՞ւ Պէցի մօրաքոյրին զաւակներէն մէկը չեք առներ :” «Պէցի մօրաքոյրին զաւակները : Կը խնդրեմ, ո՞վ է Պէցի մօրաքոյրը :” «Երեւոնի Սկովտացի կին մըն է, որ կը բնակի Թոչնոց-փողոցին մէջ : Անիկա կ'որդեգրէ աղքատ, արջանկ, անմայր մանուկներ, կը դատարակէ զանոնք, կը խնամէ զանոնք, բարի ունակութիւններ կը սորվեցնէ անոնց, և յետոյ զանոնք աղէկ տեղեր կը դընէ : Ես անոր զաւակներէն մէկն առած եմ բաւական ժամանակ առաջ, և իմ ունեցածներուս մէջ ամէնէն աղէկ աղջիկն է :”

Հետեւեալ օրը Միսիս Լէյլի գնաց Թոչնոց-փողոց, Պէցի մօրաքոյրին տունը գտնելու համար : Տունէն ներս մտածին պէս, տեսաւ ընդարձակ, կոկիկ սենեակ մը : Տախտակամածը ա՛յնքան մաքուր էր որքան կրնային ընել մարդկային ձեռքեր : Տեսաւ ութ ինը աղջիկներ երեքէ մինչև տասնհինգ տարեկան : Ամէնն ալ կ'աշխատէին : Միսիս Լէյլի քանի լաթ կ'արդուէին, ուրիշները կար կը կարէին կամ գուլպայ կը հիւսէին, և ամէնէն պզտիկները թուղթի կտորներ կ'որդէին անոնցմով լամբար վառելու համար : «Ես աղջիկ մը կը փնտռեմ, բարեկամս,” ըսաւ Միսիս Լէյլի, «և ինձի ըսին թէ ձեր տունը աղէկ տեղ մըն է աղջիկներ գտնելու համար :

Ասոնք բուն ձեր աղջիկներն են»։ «Ո՛հ, ոչ, Տիկին, ես այդպիսի հարուստ չեմ։ Բայց նայե՛ք, Լիզին կայ, որ զորաւոր և քաջ աղջիկ մըն է, Տիկին, և բնաւ նեղութիւն պիտի չտայ ձեզի ունէ նուաստ կամ անարժան ընթացքով։ Եկու՛ր, Լիզի։ Հիմա եւրեւր նայեցէք, Տիկին։ Ես այդպիսի կ'ընտրեմ իմ զաւակներս»։ «Ուրեմն ասոնցմէ ո՛չ մէկը ձերն է»։ «Ես երբեք զաւակ չունեցայ կեանքիս մէջ»։ Ըսաւ Պէյի մօրաքոյր ժպտելով։ «Ուրեմն ձեզի կը վճարուի այս զաւակները խնամելու և անոնց տուն մը պատրաստելու համար»։ «Տասը փարա անգամ, Տիկին, ո՛վ պիտի վճարէ ինձի։ Անոնք ամէնն ալ աղքատիկ որբեր են, անոնց և ո՛չ մէկը ունի հայր կամ մայր ինձմէ դատ, և ես անոնց համար թէ՛ հայր եմ թէ՛ մայր, ինչպէս կը կարծեն իրենք»։ Ըսաւ մինչ չորս կողմը անոնց կը նայէր խանդաղատանքով։ «Երբեմն քիչ մը կը ցաւիմ մտածելով թէ ինչո՛ւ այս պղտիկները առի, բայց ի՛նչ կրնայի ընել։ Անոնք համեստ ծնողներ ունէին և մեռան ծանր հիւանդութիւն քաշելէ ետքը, և ես չէի կրնար թողուլ զանոնք որ թշուառ ըլլային։ Իրաւ, քիչ բան կրնամ ընել, վասն զի այսպիսի խեղճ արարածներէն հազարաւորներ կան աշխարհի մէջ, բայց պիտի ընեմ ինչ որ կրնամ։ Անոնցմէ երեսունը մէկ հոգի աղէկ տեղեր դրի»։ «Ի՛նչ», գոչեց Միսիս Լէվի, «ըսել կ'ուզէք թէ դուք խնամեցի՞ք երեսունը մէկ մանուկներ հիմա հոս այս ունեցածներէդ զատ»։ «Սէ, յո, Տիկին, և Տէրը օրհնեց զիս և կարողութիւն տուաւ իմ ձեռքերովս կատարել այս գործը աւելի քան տասնըհինգ տարիներէ ի վեր։ Երբեք կարօտութիւն չբաշխեցի ես, ոչ ալ անոնցմէ ունէ մէկը»։

Ի՛նչ դեղեցիկ գործ կը կատարէր Պէյի մօրաքոյր միս մինակ այդ փոքրիկ նեղ փողոցին մէջ, մինչ գործունեայ և աղմկայի աշխարհին մէջ մէկը չէր գիտեր։ Բայց Աստուած գիտէր ամբողջապէս։ Առանց ամուսնի և առանց բուն իր զաւակներն ունենալու, առանց իրեն օգնող եկեղեցիի կամ եկեղեցւոյ հոգաբարձուաց ժողով մը, առանց իր ձեռքով շահածէն զատ ուրիշ միջոցի մը, անիկա մայր մը եղած էր երեսունըմէկ աղքատիկ մանուկներու, բաց ի այն ժամանակ իր տան մէջ գտնուած ութ ինը մանուկներէն։ Ան հագուեցուցեր էր, կերակրեր էր և կրթեր էր զանոնք

իրեն գիտցած ամէնէն աղէկ կերպով, և յետոյ աղէկ տուներ գտեր էր անոնց համար որպէս զի օգտակար և երջանիկ ըլլային։



Կ'ԱՐԺԷ՞Ք Ձեզի ՀԱՄԱՐ ԵՂԱՍԾ ԾԱԽՔԸ

Մանչ մը կամ աղջիկ մը շատ ծախք կը սրահանջէ, դրամական տեսակէտով։ Գէշ չէ հաշիւ ընել թէ ձեր ծնողները ի՛նչ ծախք բրած են ձեզի համար մինչև հիմա։ Հաշիւ ըրէք ձեր կերակուրը և հանդերձները, դպրոցի գիրքերը, հիւանդութեան ծախքերը — բժշկի, դեղերու, ևն. — ձեր զուարճութեան համար եղած ծախքերը, և պիտի բանաք ձեր սպքերը երբ տարրեր տարրեր ծախքերուն դուժարը հաշուէք։ Բայց վերջապէս ստակի ծախքը չնչին բան մըն է ձեր ընդհանուր ծախքին նայելով։ Ձեր կեանքին առաջին տարիներուն մէջ ձեր մօր գրեթէ բոլոր ժամանակը և զօրութիւնը ծախուեցան ձեզ խնամելու համար։ Անիկա ի՛նչպէս հսկեց ձեր վրայ երբ հիւանդացաք, ի՛նչպէս անձկոտ խորհուրդ ծախուած է ձեզի կրթութեան լաւագոյն տեսակը տալու համար։ Դատեր հարստութիւն գիղած են աւելի քիչ ցաւով և աւելի քիչ դժուար աշխատութիւնով, բաղդատելով ձեզի համար եղածին հետ։ Ձեզի համար բաւական շատ ծախք եղած է։ Ասիկա հաստատուած իրողութիւն է։ Ուստի յաջորդ հարցումը սա է թէ դուք այդ ծախքը կ'արժէ՞ք, երբեմն կը լսենք թէ այսինչ հարուստը մեծ դումար մը ստակ ծախսեր է միակ պատկեր մը կամ դոհարեղէն մը գընելու համար։ Երբ մենք հարցումնործ կ'ընենք, կը գտնենք թէ այդ պատկերը զըլտի գործոց մըն է եղեր, և թէ զնոցը վատահ է թէ անոր արժէքը պիտի բարձրանայ քանի՛ անցնի ժամանակը, և թէ գոհարեղէնը անթերի ու կատարեալ է և կ'արժէ բոլոր իրեն համար վճարուած ստակը։ Բայց երբեմն մարդիկ մեծ գումարներ կը վճարեն այնպիսի նկարներու համար, որոնք խեղճուկ նմանութիւններ են հին վարպետներու գործերուն, կամ կեղծ ագամանդներու համար, և յետոյ աշխարհ կը հետեցնէ թէ անոնք խաբուած են, և ուստի կը խրղճայ անոնց վրայ։ Գուք կ'արժէ՞ք ձեզի համար եղած ծախքը։ Ասիկա հարցում մըն է, որուն վրայ արժան է մտածել։ Կեղծ գոհարեղէնը չընար ինքզինք ստոյգ գոհարեղէն ընել։ Բայց տղաք ու աղջիկներ, որոնք անխոր-

հուրդ և անդգոյշ եղած են անցեալին մէջ, կրնան որոշել հիմա թէ ապագային մէջ արժանի պիտի ըլլան իրենց համար եղած բոլոր բաներուն։



ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՀԱՆՆԵՆՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«Ազգային բերանը կենաց աղբուր է» Առակ Ժ. 11 :

Թ	Ա	Մ	Ա	Ր
Գ	Ա	Գ	Ո	Ն
Կ	Ա	Ր	Ի	Ն
Բ	Ե	Ր	Ի	Ա
Դ	Ո	Ի	Ր	Ա
Ն	Ը	Կ	Ա	Ն
Ն	Ը	Կ	Ե	Ր
Յ	Ա	Ն	Ո	Ղ
Գ	Ե	Բ	Ա	Ղ
Բ	Ի	Ի	Ք	
Ո	Վ	Ա	Ե	

Լուծեցին, Մարտան. — Ռօզա Ներսէսեան։ Կերեն. — Մհաք Ս. Խանթիմուրեան։ Վան. — Տեղբան Կ. Ապաճեան, Միհրան Մ. Տ. Սարգիսեանց, Մ. Աղբ. — Ահարոն Կարապետեան, Յակոբ Տ. Ղուկասեան, Պաղտատար Կարապետեան, Տնտապետ Խաչատուրեան, Գեորգ Ալվարդեան, Տեղապետ. — Յովհաննէս Գ. Միթեվէլլեան, Խաչատուր Մուրատեան։ Մարտի. — Միհրան Մ. Թերթախեան։



ՀԱՆՆԵՆՈՒԿ ԿՈՒՐՔ ԳԻՐԲԷՆ

.	.	.	0	.
.	.	.	0	.
.	0	.	0	.
.	0	.	0	.
0	.	0	.	.
.	0	.	.	.
0

1. Փղապարտ մէկ քաղաքը.
 2. Գիշտիչ թռչուն մը.
 3. Եօթն եկեղեցիներէն մէկը.
 4. Փոքր մարգարէներէն մէկը.
 5. Բրեւոտեայ կին մը.
 6. Յակոբայ որդիներէն մէկը.
 7. Ձրոյ տարածութիւն մը.
- Նշանակեալ անունները տակ տակ դիր այնպէս որ խաչ մը ձեւանայ, Ձրոներուն տեղ դըրուելու գերբը վարէն վեր կը կարդացուին, 1. Երեւելի թագաւոր մը, 2. Մարմին մէկ անգամը, 3. Աչքերու զարդ մը :

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ, կանխիկ, ամեն տեղւոյ համար :

Ամերիկայի Միտիոնարաց Ընկերութեան կողմէն Արտօնատէր ճ. Բ. Կրիւն Տնօրէն—Ոմբազիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՔ ՊՅՈՒՆՆԻ
Ֆինանսներու Եղբուր, Ամերիկայի խան